ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՉԳԷՆ Ա-Ի ՔԱՐՈԶԸ ԽՕՍՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(3 Դեկտեմբեր 1989 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Երանի, որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին» (Մատթ. Ե 6):

«Երանի նրանց, ովքեր քաղցը և ծարաւը ունեն արդարութեան, որովհետև նրանք պիտի յագենան»:

Սիրելի հաւատացեալ ժողովուրդ,

Այս նշանաւոր պատգամը մեզ է գալիս մեր Փրկչի Քրիստոսի Սուրբ Աւետարանից, բոլորիդ ծանօթ Լեռան քարոզից, երանութիւնների շարքից: Վերջին երկու հազար տարիների մարդկային աշխարհի տարածքի վրայ, յատկապէս քրիստոնէական աշխարհի, ճառագայթում է այս պատգամը: Շատ ժողովուրդներ իրենց պատմութեան ընթացքում, մանաւանդ ծանր օրերին, տագնապալի շրջաններին, գտել են Յիսուսի այս խօսքի մէջ՝ յոյս, քաջալերանք և հաւատք յաղթանակի: Արդարութեան ծարաւի ժողովուրդների շարքում, ես կասէի առաջին շարքերում, բազում դարերից ի վեր գտնուել է նաև մեր ազգը: Կարծում եմ, սխալուած չեմ լինի, եթէ ասեմ, թէ դարեր շարունակ մեր ազգի պատմութիւնը վկայում է այդ, որովհետև կէպքերի, տագնապների, դժբախտութիւնների, ողբերգութիւնների շրջաններին, հայ ժողովուրդը միշտ ապաւինել է Քրիստոսի այս պատգամին: Միշտ ծարաւի մնալով արդարութեան, մխիթարութիւն է գտել ու ապրել անմար յոյսով և հաւատքով, թէ բոլոր դժուարութիւնները յաղթահարելով, պիտի հասնի իր արդար սպասումների իրականացման, պիտի յագենայ նրա ծարաւը արդարութեան:

Այս իրողութիւնը ես տեսնում եմ յստակ և ամբողջական կերպով ու հաստատում մանաւանդ մեր ազգի վերջին հարիւր և աւելի տարիների ընթացքում: Այն շրջանում, որ մենք կոչում ենք շրջան ազգային ազատագրական շարժման և ազգային-մշակութային վերածննդի թէ Արևմտահայաստանում և թէ Արևելահայաստանում:

Դուք քիչ թէ շատ ծանօթ էք մեր ազգի պատմութեան և գիտէք, որ անցեալ դարի սկիզբներից մինչև մեր դարի սկիզբները, մեր ժողովուրդը թէ Արևելքում, թէ Արևմուտքում, ապրել է ծանր պայմանների տակ, բռնակալ պետութիւնների լծի ներքոյ: Սակայն ազատութեան ու արդարութեան

ծարաւը միշտ մնացել է իր առաջնորդող ոգին. նաև որոշ արտաքին պայմանների բերումով նա ծնունդ է տուել հայ ազատագրական շարժմանը:

Այստեղ ես կուզենայի յիշել և ընդգծել, թէ այս ճանապարհի վրայ բախտորոշ դեր է կատարել ինչպէս հին ժամանակներում, նաև այս անգամ, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, իր գլուխ ունենալով թէ Ս. Էջմիածինը, թէ Կիլիկեան Աթոռի Կաթողիկոսութիւնը, և թէ կարևոր չափով, Պոլսի հայոց Պատրիարքութիւնը: Նրանք նախակարապետի դեր են կատարել բացելու համար հայոց պատմութեան այս նոր շրջանը: Դեռևս 18-րդ դարի վերջերից մինչև 19-րդ դարի կէսերը հայ հոգևորականները, պայծառամիտ և քաջակորով անձնաւորութիւններ, թէ այստեղ Ս. Էջմիածնում՝ ինչպէս եղել են նշանաւոր Սիմէոն Երևանցի կաթողիկոսը, Ներսէս կաթողիկոս Աշտարակեցին ու նրա աշակերտը, Սուրբ Էջմիածնի միաբան Խաչատուր Աբովեանը և նրանց հաջորդները, Արևմուտքում՝ Կ. Պոլսի յայտնի Պատրիարք Յովհաննէս Կոլոտը, նրա յաջորդը՝ Նալեան Պատրիարք, նաև հայր Ղևոնդ Ալիշանը, Խրիմեան Հայրիկը և ուրիշները, լուսաւոր ճառագայթում են սփռել հայ հոգևոր, կրթական, ազգային կեանքի տարածքի վրայ, հոգեբանական և իմացական գետինը պատրաստելով ապագայ վերածննդի և ազատագրական շարժման: Հոգևոր և կրթական գործունէութեամբ, գիր ու գրականութեան և դպրութեան տարածումով, տպարաններ հիմնելով, նրանց յաջողուեց արթնացնել հայ ազգի ինքնագիտակցութիւնը:

Հսկայական գործունէութիւն են ծաւալել այս հոգևորականները այդ շրջանում, որի վրայ խարսխուեց ու զարգացաւ ազգային վերածնունդը և ազատագրական շարժումը թէ Արևմտահայաստանում, թէ Արևելահայաստանում: Հայոց ազատագրական շարժումը մի հերոսական դիւցազներգութիւն է աշխարհի պատմութեան առջև:

Երբ մեր ազգը գտնուել է մահու-կենաց կացութեանց դէմ յանդիման, երբ կանգնել է իր ժանիքաւոր ճակատագրի առաջ ճակատ առ ճակատ, ինչպէս ասել է մեր ժողովրդի տառապանքի երգիչ Աւետիս Ահարոնեանը, այդպիսի պահերին հայ ազգը արձանագրել է փայլուն յաղթանակներ:

Այս ճանապարհով է, որ վերջապէս փայլատակեց յաղթանակը Սարդարապատի, հիմնուեց նոր շրջանի հայոց առաջին պետութիւնը 1918-ի Մայիսի 28-ին, երկար դարերի ստրկութիւնից յետոյ, որը շարունակուեց Խորհրդային կարգերի հաստատումով և, որը շարունակութիւնն է Հայաստանի գոյատևման ու ճանապարհը դէպի առաւել լուսաւոր ապագայ:

Ահա թէ ինչու ամէն տարի մեր եկեղեցիները և Հայաստանում և արտասահմանում գոհաբանական մաղթանքներ են կատարում թէ Մայիսի 28-ի և թէ Նոյեմբեր 29-ի առիթներով: Այսօր մենք այդ գոհաբանական մաղթանքը պիտի կատարենք սուրբ պատարագի աւարտին:

Այսօր, սակայն, սիրելի ժողովուրդ, մենք բացառիկ կացութեան առջև ենք գտնուում հոգեպէս և ազգովին թէ Հայաստանում, թէ Արցախում, թէ ներքին ու արտաքին սփիւռքում: Վերստին գտնուում ենք մեր ժանիքաւոր ճակատագրի առաջ ճակատ առ ճակատ: Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ վերջին իրադարձութիւնները մեզ պատճառեցին և տխրութիւն և յուսախաբութիւն, բայց ոչ հուսահատութիւն: Դուք գիտէք, որ սա է խոր զգացմունքը հայ ժողովրդի ամենուրէք, իբրև հետևանք Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ վերջին որոշման Կենտրոնական Դերագոյն խորհրդում: Հայ ժողովուրդը դժգոհ է: Արդարութեան ծարաւի մեր ժողովուրդը

դժգոհ է: Ահա այսպիսի պահ ենք ապրում մենք ազգովին: Ես չեմ կարող նախատեսել, թէ ինչպէս կը զարգանան յետագայ դէպքերը, յետագայ իրադրութիւնները հայ ժողովրդի և յատկապէս դարաբաղեան հայութեան համար, բայց ինձ թւում է, թէ այս տագնապալի օրերին իսկ, այս երկունքի օրերին՝ հայոց պատմութեան բազմադարեան մատեանում բացւում է մի նոր էջ:

Ժամանակն է, որ ամբողջ հայութիւնը ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, համախմբուի, միանայ և միասնական վճռականութեամբ դիմաւորուի այն դժուարութիւնները, այն վտանգը նոյնիսկ, որի առջև գտնւում է այսօր մեր Մայր Հայրենիքը: Այդ միասնութիւնը պէտք է արտայայտուի ոչ միայն խօսքով կամ կոչերով, այլ գործնապէս: Հարկ է իմաստութեամբ ու խորամտութեամբ որոնել գործելու լաւագոյն ճանապարհները, լաւագոյն եղանակները բոլորիս սուրբ նպատակին հասնելու համար: Այս առաջադրանքը ես հեռագրեցի արտասահմանի մեր բոլոր եկեղեցական կենտրոններին Դեկտեմբերի 2-ին:

Երևի դեռևս երկար ժամանակ մենք այս տագնապալի կեանքի մէջ դտնուենք: Պէտք է գործենք համարձակութեամբ, արդար պահանջատերի գիտակցութեամբ, ի հարկին նաև խոհեմութեամբ ու համբերութեամբ, բայց միշտ նոյն հաւատքով ու սպասումով, որ արդարութեան ծարաւ ունեցողներ պիտի յագենան:

Բոլոր հայերը անխտիր, սիրտ սրտի ու ձեռք-ձեռքի, աշխարհին թող ասեն, որ Արարատի ստորոտում և Արցախի լեռների բարձունքներում կայ մի ժողովուրդ, որը մարտնչում է վասն մարդու իրաւունքների պաշտպանութեան, վասն իր ազգային ինքնորոշման իրաւունքի պահպանման և վասն ազատ ապրելու իր կամեցողութեան:

Սիրելի ժողովուրդ, սուրբ պատարագից յետոյ, գոհաբանական մաղթանքի պահին, եկէք միատեղ աղօթենք առ Աստուած, որ մեր Մայր Հայաստանը մնայ անսասան և անշարժ, որ մեր հայրենի ժողովուրդը պահպանի իր կեանքի անվտանգութիւնը ու հասնի իր արդար իղձերի իրականացման ափին:

«Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին»:

Օրհնութիւն ե խաղաղութիւն ընդ ձեզ. ամէն: